ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» մայիսի 2016 թ. N 135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՈԼԻԿԻ ԱԿԱՆՈՂ ՑԵՑ, ԿԱՐՏՈՖԻԼԻ ՑԵՑ, ԽՆՁՈՐԵՆՈՒ ՊՏՂԱԿԵՐ ԵՎ ԽԱՂՈՂԻ ՈՂԿՈՒԶԱԿԵՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՖԵՐՈՄՈՆԱՅԻՆ ԹԱԿԱՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետի դրույթներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում լոլիկի ականող ցեց, կարտոֆիլի ցեց, խնձորենու պտղակեր և խաղողի ողկուզակեր վնասատուների ֆերոմոնային թակարդների միջոցով մոնիթորինգի իրականացման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրեն Ա. Ավագյանին՝ ապահովել Կազմակերպության արտաբյուջետային միջոցների հաշվին Ծրագրի իրականացումը:

3. Աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ Ա. Հարությունյանին և գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության պետ Կ. Փահլևանյանին Ծրագրի իրականացման ընթացքում ապահովել մոնիթորինգի անցկացումը:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղիյանին և նախարարի տեղակալ Ս. Գալստյանին:

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2016 թվականի մայիսի ___-ի N____-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՈԼԻԿԻ ԱԿԱՆՈՂ ՑԵՑ, ԿԱՐՏՈՖԻԼԻ ՑԵՑ, ԽՆՁՈՐԵՆՈՒ ՊՏՂԱԿԵՐ ԵՎ ԽԱՂՈՂԻ ՈՂԿՈՒԶԱԿԵՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՖԵՐՈՄՈՆԱՅԻՆ ԹԱԿԱՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մասնագետների կողմից Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի մի շարք համայնքներում դեռևս 2011 թվականին հայտնաբերվել են կարտոֆիլի ցեց և լոլիկի ականող ցեց վնասատուները, որոնք տնտեսական մեծ վնաս են հասցնում Արարատյան հարթավայրում վաղահաս կարտոֆիլի, լոլիկի, սմբուկի և տաքդեղի մշակությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններին ինչպես բաց դաշտում ու ջերմատներում, այնպես էլ՝ բերքի պահպանության ընթացքում:

2. Հողօգտագործողները, չկարողանալով ճիշտ որոշել պայքարի միջոցառումների իրականացման ժամկետները, ստիպված ավելացնում են քիմիական մշակումների քանակը, կատարում լրացուցիչ և անարդյունավետ ծախսեր, որոնց արդյունքում բարձրանում է արտադրանքի ինքնարժեքը, նվազում ստացվող եկամուտը: Չպահպանելով օգտագործված բույսերի պաշտպանության միջոցների սպասման ժամկետները՝ շուկայահանվում են մարդու առողջության համար վտանգավոր բանջարեղեն, կարտոֆիլ և պտուղներ:

3. 2013 թվականին ծառայության մասնագետների կողմից Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում փորձնական, դաշտային պայմաններում ուսումնասիրվել էր «Համառուսաստանյան բույսերի կարանտինի կենտրոն» պետական դաշնային բյուջետային կազմակերպության կողմից արտադրվող ֆերոմոնային թակարդների օգտագործման

արդյունավետությունը, որի արդյունքները հաշվի առնելով՝ 2014 և 2015 թվականներին Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվել են «Հայաստանի Հանրապետությունում կարտոֆիլի ցեց և լոլիկի ականող ցեց վնասատուների մոնիթորինգի իրականացման նպատակով պետական աջակցության» ծրագրերը: 2015 թվականին ծրագրի իրականացման համար «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրում կատարվել է փոփոխություն և Հայաստանի Հանրապետության մարզերի մորմազգի մշակաբույսերի շուրջ 10100 հեկտար տարածքի վրա տեղադրված 3300 ֆերոմոնային թակարդների միջոցով իրականացված մոնիթորինգի արդյունքում կատարվել է արդյունավետ պայքարի միջոցառումներ և զգալիորեն կրճատվել կարտոֆիլի ու լոլիկի բերքին հասցված վնասը:

4.2015 թվականին ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից անհատույց տրամադրված 20-ական հատ խնձորենու պտղակերի և խաղողի ողկուզակերի ֆերոմոնային թակարդներով մոնիթորինգի իրականացման մեթոդները ուսուցանվել են հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերի գյուղատնտեսության աջակցության կենտրոնների և Կազմակերպության մարզային մասնագետները:

5. Միջազգային փորձը ցույց է տվել, որ վնասատուների դեմ պայքարի միջոցառումների իրականացման ճիշտ ժամկետների որոշումը հնարավոր է միայն համապատասխան ֆերոմոնային թակարդների օգտագործմամբ մոնիթորինգի իրականացման միջոցով:

6. Կազմակերպություն արտաբյուջետային միջոցներով ձեռք բերված լոլիկի ականող ցեցի, կարտոֆիլի ցեցի, խնձորենու պտղակերի և խաղողի ողկուզակերի ֆերոմոնային թակարդների ու օժանդակ պարագաների օգնությամբ մոնիթորինգ կիրականացվի

Հայաստանի Հանրապետության մարզերի մորմազգի մշակաբույսերի դաշտերում, խնձորի և խաղողի այգիներում: Անհրաժեշտ ֆերոմոնային թակարդների և օժանդակ պարագաների պահանջարկը հաշվարկելիս՝ հիմք են ընդունվել 2015 թվականի մորմազգի մշակաբույսերի փաստացի ցանքատարածությունները և նախարարությունում անցկացված մասնագիտական քննարկումների արդյունքները:

7. 2016 թվականին հանրապետության բոլոր մարզերում կիրականացվի մոնիթորինգ՝ ֆերոմոնային թակարդների կիրառմամբ, տեղադրվող թակարդների բաշխումը ներկայացվում է N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1

Ֆերոմոնային թակարդների բաշխումն՝ ըստ մարզերի

հատ

Մարզը	Լոլիկի ականող ցեց	Կարտոֆիլի ցեց	Խնձորենու պտղակեր	Խաղողի ողկուզակեր
Արագածոտն	10	10	30	10
Արարատ	210	10	7	32
Արմավիր	185	10	8	38
Գեղարքունիք	30	30	5	
Լոռի	15	15	5	
Կոտայք	10	10	25	
Շիրակ	15	15	5	
Սյունիք	10	10	5	
Վայոց ձոր	5	5	5	10
Տավուշ	10	10	5	10
Ընդամենը	**500**	**125**	**100**	**100**

8. 2016 թվականի հունիս-սեպտեմբեր ժամանակահատվածում հանրապետության մարզերի մորմազգի մշակաբույսերի դաշտերում լոլիկի ականող ցեցի և կարտոֆիլի ցեցի թակարդներում ֆերոմոնային գլխիկները վեգետացիայի ընթացքում կփոխվեն 3, իսկ սոսնձաթղթերը՝ 6 անգամ: Խնձորի և խաղողի այգիներում խնձորենու պտղակերի և խաղողի ողկուզակերի թակարդներում ֆերոմոնի գլխիկները վեգետացիայի ընթացքում (հունիս-օգոստոս) կփոխվեն 2, իսկ սոսնձաթուղթը՝ 4 անգամ:

9. Դաշտում ֆերոմոնային թակարդները կամրացվեն փայտից կամ պլաստիկ նյութից պատրաստված Г-աձև, 65-70 սմ բարձրությամբ սրածայր ցցերին, խնձորանոցներում՝ ծառերի ճյուղերին, իսկ խաղողի այգիներում՝ լարերին:

10. Ծրագրի հաշվարկային գինը կազմում է 3954.8 հազ. դրամ, հաշվարկների համար հենք է հանդիսացել 2015 թվականին Կազմակերպության կողմից «Հայաստանի Հանրապետությունում կարտոֆիլի ցեց և լոլիկի ականող ցեց վնասատուների մոնիթորինգի իրականացման նպատակով պետական աջակցության» ծրագրի իրականացման համար ձեռք բերված ֆերոմոնային թակարդների և օժանդակ պարագաների արժեքները և կատարված այլ ծախսերը, որոնք ներկայացվում է N 2 աղյուսակում:

Աղյուսակ N 2

Հաշվարկ

Հայաստանի Հանրապետությունում ֆերոմոնային թակարդների կիրառմամբ մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ ֆերոմոնային թակարդների և օժանդակ պարագաների

Ապրանքը	Գինը (դրամ)	Քանակը (հատ)	Արժեքը (հազ. դրամ)
Թակարդ, սոսնձաթուղթ և կարտոֆիլի ցեցի ֆերոմոնով գլխիկ (Phthorimaea operculella)	900.9	125	112.61
Թակարդ, սոսնձաթուղթ և լոլիկի ցեցի ֆերոմոնով գլխիկ (Tuta absoluta)	847.0	500	423.50
Լոլիկի ցեցի ֆերոմոնով գլխիկ	346.5	1500	519.75
Կարտոֆիլի ցեցի ֆերոմոնով գլխիկ	415.8	375	155.93
Թակարդ, սոսնձաթուղթ և խնձորենու պտղակերի ֆերոմոնով գլխիկ (Laspeyresis pomoneiia L.)	770.0	100	77.00
Թակարդ, սոսնձաթուղթ և խաղողի ողկուզակերի ֆերոմոնով գլխիկ (Lobesia botrana Schiff.)	770.0	100	77.00
Խնձորենու պտղակերի ֆերոմոնով գլխիկ	577.5	200	115.50
Խաղողի ողկուզակերի ֆերոմոնով գլխիկ	577.5	200	115.50
Լրացուցիչ սոսնձաթուղթ (2 հատ)	167.09	2275	380.13
Ընդամենը			1976.92
ԱԱՀ 20 %			395.38
Ընդամենը ֆերոմոնային թակարդների և օժանդակ պարագաների արժեքը			2372.3

Ֆերոմոնային թակարդների ամրացման համար անհրաժեշտ 625 հատ ցցերի արժեքը կազմում է 312.5 հազ. դրամ, ֆերոմոնային թակարդների և օժանդակ պարագաների

տեղափոխման ծախսերը՝ 500.0 հազ. դրամ, իսկ Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ծախսերը՝ 770.0 հազ. դրամ:

11. Հայաստանի Հանրապետության մարզերի խնձորի և խաղողի այգիներում, մորմազգի մշակաբույսերի դաշտերում տեղադրված 825 ֆերոմոնային թակարդների ուսումնասիրությունը, մեկշաբաթյա պարբերականությամբ, կիրականացվեն Կազմակերպության բուսասանիտարիայի մարզային մասնագետների կողմից:

12. Համայնքի ղեկավարները կարող են աջակցել Կազմակերպության մասնագետներին ֆերոմոնային թակարդների տեղադրման ընթացքում:

13. Տեղադրված ֆերոմոնային թակարդների պահպանությունը 2016 թվականի ամբողջ վեգետացիայի ընթացքում կիրականացվի հողօգտագործողների աջակցությամբ:

14. 2016 թվականի վեգետացիայի ընթացքում մոնիթորինգ իրականացնող մասնագետ-ները և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների խորհրդատուները խորհրդա-տվություն կտրամադրեն հողօգտագործողներին վնասատուների դեմ պայքարի մի-ջոցառումների կազմակերպման ժամկետների, օգտագործվող բույսերի պաշտպանության միջոցների և դրանց չափաքանակների վերաբերյալ:

15. Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ Կազմակերպության կողմից յուրաքանչյուր ամիս մինչև հաջորդող ամսվա 10-ը հաշվետվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

16. Ծառայության մասնագետները «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վերահսկողություն կիրականացնեն հողօգտագործողների կողմից բույսերի պաշտպանության միջոցառումների կատարման նկատմամբ:

17. Ծրագրի իրականացման և հողօգտագործողների կողմից ագրոտեխնիկական համալիր միջոցառումների կատարման արդյունքում ակնկալվում է՝

- բերքի կորուստների նվազում,
- օգտագործվող բույսերի պաշտպանության միջոցների ծախսի կրճատում,
- արտադրվող բանջարեղենի, կարտոֆիլի, խնձորի և խաղողի ապրանքային տեսքի ու որակի բարելավում: